ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 110 - Ա

„18" հոկտեմբեր 2025թ.

ք.Արտաշատ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 5-Ի ԹԻՎ 141 ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ պարբերությամբ, «Քաղաքացիական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի զ) ենթակետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի օգոստոսի 18-ի «Վտանգավոր տարածքից բնակչության, նյութական և մշակութային արժեքների տարահանման կարգը հաստատելու մասին» թիվ 1180-Ն որոշմամբ հաստատված կարգով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հաստատել.

1) Արարատի մարզի բնակչության տարահանման հանձնաժողովի կազմը՝ համաձայն հավելված 1-ի

2) Արարատի մարզի տարահանման հանձնաժողովի աշխատանքային խմբերի կազմերը՝ համաձայն հավելված 2-ի

3) տարահանման հանձնաժողովի կանոնադրությունը՝ համաձայն հավելված 3-ի

4) Արարատի մարզի համայնքների վարչական տարածքներում գործող ուսումնական հաստատությունների և մշակութի տների բազայի վրա ստեղծված տարահանման (ընդունման) հավաքակայանները, ժամանակավոր տեղակայման կետերը, երկարատև բնակության կետերը՝ համաձայն հավելված 4-ի

2. ՈՒԺը կորցրած ճանաչել « Արարատի մարզպետի 2021 թվականի օգոստոսի 9-ի թիվ 216 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» մարզպետի 2022 թվականի մայիսի 5-ի թիվ 141 որոշումը:

18.04.2025

X

ՍԵԴՐԱԿ ԹԵՎՈՆՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: TEVONYAN SEDRAK 2602900826 **Ս. ԹԵՎՈՆՅԱՆ**